**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի**
**Քարտուղարության ղեկավար**
**պարոն Տիգրան Մարտիրոսյանին**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ Ձեզ այն մասին, որ սեպտեմբերի 25-ից 28-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը պաշտոնական այցով գտնվում է Ժնևում (Շվեյցարական Համադաշնություն):

Այցի ընթացքում նախատեսվում են հանդիպումներ ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի ներկայացուցիչների, Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի Գլխավոր քարտուղար Մարկ Թոմսոնի, Խոշտանգումների դեմ համաշխարհային կազմակերպության Գլխավոր քարտուղար Ժերալդ Սթաբերոքի, ինչպես նաև Ժնևում մի շարք պետությունների (Իսրայել, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլն) ներկայացուցչությունների ղեկավարների հետ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, այցի նպատակով, ձեռք է բերել 63.000 (վաթսուներեք հազար) ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրանքի կոնյակներ, որոնք Պաշտպանն անձամբ կհանձնի համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ իբրև հարգանքի դրսևորում:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի օգնական** **Ջուլիետա Բաղդասարյան**

**25.09.2017թ.**